ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ

«ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ №1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ»-Ի

2022-2027թթ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ



ՏՆՕՐԵՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝
ԱՆՆԱ ԵՂՅԱՆ

21-րդ դարում մրցունակ պետություն նշանակում է մրցունակ կրթական համակարգ, որը պետք է ապահովի ոչ միայն գիտելիքների հաղորդումը, այլև գիտելիքի հետ աշխատելու, գիտելիք ստեղծելու ունակությունը:

2022

Բովանդակություն

1. Ներածություն …….....3
2.Դպրոցի առաքելությունը…….....4
3. Դպրոցի անձնագիր……. …….....5
4.Ծրագրի նպատակը…….....6
5.Դպրոցի գործունեության վերլուծության և նպատակադրման ոլորտները (դպրոցի առկա վիճակը)……7
5.1 Նախորդ 5 տարիների ընթացքում կատարած աշխատանքները……7
5.2 Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը…….....18
5.3 Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր……..19
5.4 Կառավարման և խորհրդակցական մարմինները……20
6. Դպրոցի գործունեության՝ առանձնացված յուրաքանչյուր ոլորտում առկա խնդիրները……..23
7.Դպրոցի զարգացման ուղղությունները……..24
7.1Դպրոցի նյութատեխնիկական բազան և ֆինանսատնտեսական գործունեությունը……..24
7.2 Զարգացման հիմնական նպատակները, կրթության որակը և համապատասխանությունը……....24
7.3 Կրթության մատչելիությունը և մասնակցությունը…….....25
7.4 Զարգացման գերակայունությունները……25
7.5 Վարչական բարեփոխումներ……27
8.Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության բարելավում……29
9.Ակնկալվող արդյունքներ……...31
10.Դպրոցը երազում է ունենալ համալրված լաբորատորիաներ……..32
11.Մեր ձեռքբերումները…… ..33
12.Վերջաբան……..34
13. «Ստ. Շահումյանի անվան հ.1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2022-2021 զարգացման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ժամանակացույց……... 34
14.Եզրափակում…… 35

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի կազմակերպչական հիմքը դպրոցի զարգացման ծրագիրն է, որը նպատակաուղղված է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումը:

«Երևանի Ստ. Շահումյանի հ.1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) զարգացման 2022-2027թվականների զարգացման ծրագիրը մշակված է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ մասի 3-րդ կետի պահանջներին համապատասխան:

Դպրոցի զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մեթոդաբանական հիմքերն են.

1. Դպրոցի ներքին գործունեության 2017-2018, 2018-2019, 2019-2020 և 2020-2021 ուսումնական տարիների ներքին գնահատման հաշվետվությունները,
2. «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը»,
3. «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագիծը,
4. «Երևանի զարգացման 2019-2023թթ. Հնգամյա ծրագիրը»,
5. Նախորդ 5 տարիների գործունեությունը,
6. Մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները
7. Դպրոցում առկա հիմնախնդիրները:

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը նախասահմանում է 2022-2027թվականների դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան, հաշվի է առնված կրթական հաստատության ինքնազարգացման ներուժը և Երևան քաղաքի «Կենտրոն» վարչական շրջանի համայնքային կարիքները:

Սույն հեռանկարային ծրագրի հիման վրա պետք է կազմվեն տարեկան աշխատանքային պլանները:

ԴԶԾ կազմելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացնել դպրոցի առաքելությունը, իմանալ ինչ է <u>ծրագիրը և պլանավորումը,</u>

Ծրագրի հիմնամեխը դպրոցի զարգացման նոր ուղիներ գտնելն է, որոնք պետք է նպաստեն սովորողի ներդաշնակ զարգացմանը, կարողունակ քաղաքացու ձևավորմանը, ով կունենա ազգային արժանապատվության խոր գիտակցություն, ազգային արժեքների արժևորման ու դրանց պահպանման պատասխանատվություն, կկարողանա ինտեգրվել սոցիումին ու կունենա իր ներուժին և նախասիրություն-ներին համապատասխան մասնագիտական կողմնորոշում:

2.ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ստեփան Շահումյանի անվան հ. 1 հիմնական դպրոցի առաքելությունն է.

- Բարձրացնել դպրոցում կրթության որակը,
- Սովորողների համար ստեղծել, նախնական մասնագիտական կրթության ընտրության հնարավորություն՝ հաշվի առնելով աշակերտների կարողություններն ու նախասիրությունները,
- Ապահովել շրջանավարտների պատրաստվածությունը ինքնուրույն կյանք վարելուն, աշխատաշուկա մտնելուն, ապահովել կապ հիմնական և մասնագիտական կրթության միջև:

Ե՛վ պետական քաղաքականության, և՛ հասարակական գիտակցության մեջ կրթությունը, հատկապես որակյալ կրթությունը և դաստիարակությունը շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալտնտեսական առաջընթացին գլխավոր գործոն, ուստի դպրոցի առաքելությունը նաև կրթական այնպիսի միջավայրի ձևավորումն է, ուր յուրաքանչյուր երեխա ունակ կլինի սովորելու, յուրաքանչյուրը կունենա զարգացման իր հետագիծը:

Բարեփոխումների շոշափելի և հասարակության կողմից արժևորող ձեռքբերումների բացակայության պատճառով դպրոցը ամբողջ կրթական համակարգի հետ հայտնվել է մի իրավիճակում, երբ խաթարված է կրթական հաստատությունների հեղինակությունը, վտանգված է վստահությունը բարեփոխումների և համակարգի ներուժի նկատմամբ:

Չնայած դրան՝ և՛ հասարակական գիտակցության, և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես որակյալ կրթությունը և դաստիարակությունը շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն: Ուստի դպրոցի առաքելությունն՝ բարձրակարգ կրթություն ստանալու համար անհրաժեշտ կրթական միջավայրի ձևավորումը և համայնքի հետ ակտիվ համագործակցող այն դպրոցի ձևավորումը, ուր յուրաքանչյուր երեխա ունակ է սովորելու, յուրաքանչյուրն ունի զարգացման իր հետագիծը, իսկ օժտված երեխաների տարբերակված, խորացված ուսուցման կազմակերպման համար պետք է ստեղծվեն համապատասխան պայմաններ՝ սկսած խորացված ուսուցում կազմակերպելու համար նախատեսված դասագրքերից և ուսումնաօժանդակ գրականությունից:

3.ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ

Սույն զարգացման ծրագիրը կազմվել է
ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 15.01.2021թ. «Պետական հանրակրթական
ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման
պահանջներն ու ձևաչափը հաստատելու մասին»№16-Ն հրամանի
պահանջներին համապատասխան:

Ստ. Շահումյանի անվան h1, միջնակարգ դպրոցը հիմնական է համարվել ՀՀ կառավարության (կադաստրի վկ. 15.05.2013թ.):

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 24.01.2003թ., իսկ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 03.01.2012թ.:

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 19.06.2013թ. N835Ա/Ք հրամանով տրված լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրականացնել հետևյալ կրթական ծրագրերը՝

- Տարրական հանրակրթ.-300 աշ.
- Հիմնական ընդհանուր կրթ. 03.02.2006թ.-220 աշ.

Դպրոցի շենքը կառուցվել է 1928թ.: Կառուցվելուց հետո կապիտալ վերանորոգման չի ենթարկվել, առանձին տարիներին միայն մասնակի վերանորոգումներ են կատարվել: Բաղկացած է 1 մասնաշենքից: 2017 թվականից ի վեր վերանորոգվել է:

Դպրոցն այժմ ունի 30 դասասենյակ, 7 առարկայական կաբինետ, 1 գրադարան, 2 լաբորատորիա, 2 համակարգչային կաբինետ, 22 գործող համակարգիչ, 1 հանդիսադահլիճ, 1 մարզադահլիճ, 1 ուսուցչանոց, 1 բուֆետ, 4 սանհանգույց, 1 բուժկետ, ջեռուցման լոկալ համակարգ:

2021-2022 ուսումնական տարում դպրոցը համալրված է 13 դասարանով, 283 աշակերտով. Կրտսեր դպրոցում՝ 7 դասարան, միջին դպրոցում 6 դասարան:

Դպրոցում աշխատում են 28 ուսուցիչներ, որոնցից 28-ը ունեն բարձրագույն կրթություն: Բոլոր ուսուցիչներն ընդգրկված են 5 առարկայական մեթոդական միավորումներում: 2017 թվականից ի վեր ուսուցիչներից երեքը ստացել են տարակարգ:

Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածության գործակիցը 14 ժամ է:

Մեկ ուսուցչին բաժին է ընկնում 10 աշակերտ:

4.ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

2008 թվականի մարտի 27-ին կայացած ՀՀ կառավարության նիստում հավանության արժանացավ «Դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը» համաձայն որի՝ դպրոցը հանդիսանում է նախամասնագիտական կրթություն ապահովող օղակ և կոչված է սովորողներին պատրաստելու ինքնուրույն կյանք վարելուն և աշխատաշուկա մտնելուն

Ծրագրի նպատակն է ապահովել Ստ. Շահումյանի անվան հ.1 հիմնական դպրոցի համապատասխանությունը ոչ միայն ազգային դպրոցի, այլև միջազգային դպրոցների չափանիշներին, լուծում տալու դպրոցի առջև դրված խնդիրներին, որոնք են.

- Բարձրացնել կրթության որակը,
- Ապահովել աշակերտների համակողմանի զարգացումը, դաստիարակել հայրենասիրության, մարդասիրության ոգով,
- Ձևավորել գիտակցական բարձր արժեհամակարգ ունեցող կարողունակ անհատ:

Այդ նպատակով նախատեսվում է իրականացնել վարչական, դաստիարակչական, մեթոդական և նյութատեխնիկական կատարելագործումներ:

5.ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

(ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԿԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ)

5.1 Նախորդ 5 տարիների ընթացքում կատարած և ակնկալվող աշխատանքները (դպրոցի առկա վիճակը)

Իրավիճակի վերլուծությունը շատ կարևոր է դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար: Վերլուծության համար հիմք են հանդիսացել նախորդ զարգացման ծրագրի 5 տարիների ընթացքը և դպրոցի գործունեության ներքին գնահատման վերջին 3 ուսումնական տարիների հաշվետվությունների արդյունքները:

2017 թվականի առկա վիճակ	2017-2022 Ձեռքբերումներ	2022-2027 Ակնկալվող ծրագրեր
Կրթության որակ		
Բացակայել են • Տարակարգ ունեցող ուսուցիչ՝ 0 • Դասարան՝ 11 • Աշակերտների թիվ՝ 234 • Ուսուցիչներ՝ 30	• Տարակարգ ունեցող ուսուցիչ՝ 3 • Դասարան՝13 • Աշակերտ թիվ՝ 283 • Ուսուցիչներ՝ 28 • Սահմանային տեղի ավելացում ևս 100-ով	• Տարակարգ ունեցող ուսուցիչ՝ առնվազն 5 • Դասարան՝ 14-16 • Աշակերտ թիվ՝ սահմանային տեղերի չափով

• 1-ին դասարանի աշակերտների 1-ական դասարան • Նախակրթարանի լիցենզիա են հուշագիր	• 1-ին դասարանի աշակերտների 2-ական դասարան 2018թ-ից ի վեր • 2019 թվականին արդեն ԿԳՄՍ-ի կողմից տրված լիցենզիա	• Ուսուցիչներ՝ բոլորին դրույքով ապահովելուց հետո կունենանք 4 առարկաների ուսուցիչների թափուր հաստիք
Շենք շինություն		
	• Տեսախցիկներով հագեցած դասասենյակներ • 16 համակարգիչ • Ինֆորմատիկայի կաբինետ • «Wiki» ակումբ • Շենքում և բակային հատվածում տեսախցիկների համալրում • 1 դասասենյակ համացանցով	• Համակարգչային նոր դասասենյակ • Համակարգիչների ձեռքբերում • Ինտերակտիվ գրատախտակների ձեռքբերում • Առնվազն 4 դասասենյակ համացանցով

	• Բոլոր դասասենյակները համալրվել են տեսախցիկներով	








Նյութատեխնիկական բազա (Շենք շինություն)		
Բացակայել են	• Տարակարգ ունեցող ուսուցիչ՝ 3 • Դասարան՝ 13 • Աշակերտ թիվ՝ 283 • Ուսուցիչներ՝ 28 • Սահմանային տեղի ավելացում ևս 100-ով • 1-ին դասարանի աշակերտների 2-ական դասարան 2018թ-ից ի վեր • 2019 թվականին արդեն ԿԳՄՍ-ի կողմից տրված լիցենզիա • 1-ին հարկին հատակի հիմնանորոգում • 2 սանհանգյցների հիմնանորոգում • Սպորտային դահլիճ • Հանդիսությունների դահլիճ • Շախմատի սենյակ • 10 Դասասենյակների վերանորոգում • 3 հարկերի միջանցքների վերանորոգում • Նախասրահի վերանորոգում • Բուֆետ • Ուսուցիչների հանգստի սենյակ • Բակի ցանկապատում • Բակի կառուցապատում • Տանիքի մասնակի վերանորոգում • Մուտքի դռան փոփոխություն • Աստիճանավանդակի բազալտապատում • ԿԱՊԿՈՒ երեխաների համար նախատեսված հատուկ սենյակ	• ևս երկու սանհանգույց, որից մեկը հարմարեցված • տանիք՝ երկու թև, • Ֆիզիկայի լաբորատորիա • Քիմիայի և կենսաբանության լաբորատորիա • Ժամանակակից արդի գրադարան

	• ԿԱՊԿՈՒ երեխաների համար նախատեսված թեքահարթակ (հենաշարժողական խնդիրներով) • ԿԱՊԿՈՒ հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների համար նախատեսված պետքարան միջազգային ստանդարտներին համաձայն: • Շենքի ֆասադային հատվածի ամբողջական վերանորոգում • Մաշտոցի պողոտայի կողմից հողատարածքի ցանկապատում: • Վերանորոգված բուժկետ • Դպրոցի էլ. տնտեսությունը հիմնովին փոխարինվել է պղնձե հոսանքալարերով • Ողջ դպրոցի լույսերը փոխարինվել են LED տնտեսող լուսարձակներով • Սպորտային դահլիճում տեղադրվել են 6 հատ LED տնտեսող լուսարձակներ	• ԿԱՊԿՈՒ երեխաների համար հատուկ գույքի ձեռքբերում • Սպորտային դահլիճի գույքի ձեռքբերում

Նախորդ 5 տարիների ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

Ոլորտը	Իրականացված աշխատանքը
	Հիմնված է Ստ. Շահումյանի անունը կրող թանգարան (2019թ.)
Դպրոցի շենքային պայմաններ	Դպրոցի շենքի շահագործումը համապատասխանում է անվտանգ շահագործման նորմատիվներին, պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը: Բոլոր դասասենյակները կահավորված են բավականին լավ վիճակում գտնվող, բայց օգտագործված գույքով:
Նյութատեխնիկական բազա	Դպրոցի անհրաժեշտ մասերում՝ մուտքի մոտ, միջանցքներում, տեղադրված են տեսախցիկներ
	Գործում է անվտանգ համակարգ
Դպրոցի առաջընթացը	
Հեռավար կրթության ապահովում՝ ըստ անհրաժեշտության, միասնական կրթական հարթակի՝ MS Teams-ի կիրառությամբ	
Դպրոցի գործունեության թափանցիկության ապահովման և լուսաբանման նպատակով գործում է դպրոցի պաշտոնական կայքը՝ http://shahumyanschool.am/ Ֆեյսբուքյան էջը՝ https://www.facebook.com/profile.php?id=100008653603693	
Մանկավարժական համակազմի ձեռքբերումներ	Բոլորն ունեն բարձրագույն կրթություն և համապատասխան որակավորում
	Բոլոր ուսուցիչներն անցել են համապատասխան վերապատրաստումներ և ատեստավորված են, համապատասխանում են հիմնական դպրոցում դասավանդելու չափանիշներին
	3 ուսուցիչ ունեցել է որակավորման տարակարգ
Աջակցություն մանկավարժներին	• ՏՀՏ կարողությունների և հմտությունների զարգացում • Էլեկտրոնային կրթական ռեսուրսների օգտագործում՝ e-school.am, armedu.am, lib.armedu.am, kznakhimnadram.blogspot.com, dasaran.am, improc.am, • Հեռավար դասավանդման հմտությունների զարգացում
Ժողովրդավարական սկզբունքների կարևորում	• Ձևավորված են և ակտիվորեն գործում են աշակերտական խորհուրդն ու ծնողական խորհուրդը, որոնք սերտորեն համագործակցում են տնօրենության

	հետ
Դպրոցի համագործակցային դաշտ	Մասնակցություն հանրապետական, միջազգային մրցույթների ու մրցաշարերի՝ Best people միջազգային հանրագիտարան, «Կենգուրու» «Ռուսական արջուկ» միջազգային և «Մեղու»
Դպրոցի ակտիվություն	Հանրապետական մրցույթներ, ամենամյա ասմունքի փառատոն, ստեղծագործական մրցույթներ
	Մշակութային և սոցիալական բնույթի արտադասարանական, արտադպրոցական միջոցառումներ՝ գրական-երաժշտական կոմպոզիցիաներ, զրույց-քննարկումներ, բանավեճեր
Դպրոցում ձևավորված ավանդույթներ	Ամենամյա տարեվերջյան եռակողմ նիստ՝ դպրոց-ծնող-աշակերտ, որի ժամանակ տնօրենը տալիս է տվյալ ուստարվա հաշվետվությունը սահիկահանդեսի, ֆիլմաշարի միջոցով, տվյալ ուսումնական տարվա առավել ակտիվ ուսուցիչները, ծնողները:
	«Տարվա աշակերտ» մրցանակաբաշխություն
	«Տարվա շրջանավարտ» մրցանակաբաշխություն
	«Շահումյանական օրեր» մշակութային տասնօրյակ

Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

Դպրոցի շենքի շահագործումը համապատասխանում է անվտանգ շահագործման նորմատիվներին, պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը: Դպրոցն ապահովված է անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով:

Ֆորսմաժորային իրավիճակում կատարված չնախատեսված, բայց ճիշտ կազմակերպված աշխատանքներ

1. Համաճարակ (COVID-19 2020-2021 թվականներին մշտապես վերահսկողության արդյունքում երբևէ որևէ խախտում չի արձանագրվել համաճարակի կանոնները խախտելու պատճառով):
2. Պատերազմ (2020 թվականի պատերազմի ընթացքում արցախցի աշակերտների ներառում դպրոցում, դասագրքերի և գրենական պիտույքների ապահովում, <<Կարմիր Խաչ>> միջազգային կազմակերպության հետ տարված աշխատանքներ աշակերտների և իրենց ծնողների հետ)

5.2 Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ: Նախահաշվարկը և ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայքում: Բյուջեի ծախսի հիմնական ուղություններն են.

- ✓ Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ,
- ✓ Կոմունալ վճարներ
- ✓ Գրասենյակային և տնտեսական ապրանքներ,
- ✓ Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր,
- ✓ Կապիտալ ծախսեր
- ✓ Հատուկ նպատակային ծախսեր
- ✓ Այլ ծախսեր:

2018-2021 թվականների ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած վերջին 3 տարիներին ֆինանսական միջոցները նվազել են՝ այնուամենայնիվ տարեկան բյուջեի միջոցները հիմնականում բավարարում են աշխատավարձին և կոմունալ ծախսերին: 2021-2022 ուստարում ավելացել է սովորողների թիվը, ինչով պայմանավորված կավելանան նաև ֆինանսական միջոցները:

Դպրոցի առկա և ձեռքբերված գույքը հաշվառված է, կատարված է գույքագրում: Դպրոցի տվյալ ուստարվա բյուջեի նախագիծը, ըստ դպրոցի կանոնադրության պահանջի, տրվում է կառավարման, մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդներին՝ առաջարկություններ ստանալու նպատակով, ապա ներկայացվում լիազոր մարմնի հաստատմանը:

1.Առանձնահատուկ կարևորություն պետք է տալ դպրոցի ֆինանսավորման աղբյուրների արդյունավետ համակարգմանը: Ինչպես գիտենք, դպրոցի ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ ըստ իրականացվող հիմնական (ընդհանուր) ծրագրի՝ կախված սովորողների թվից:
Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ լրացուցիչ ֆինանսավորման համար.

ա. Կազմակերպել վճարովի կրթական ծառայություններ

2. Բյուջեից տնտեսված և արտաբյուջետային ստացված գումարները նպատակաուղղել.
ա. դպրոցի շենքի ընթացիկ նորոգմանը
բ. դպրոցի շրջակայքի բարելավմանը
գ. դպրոցական գույքի ձեռքբերմանը
դ. համակարգչային սենյակի ձևավորումը, էլեկտրոնային գրատախտակների ձեռքբերմանը
ե. ապահովել թափանցիկությունն ու իրազեկվածությունը:

5.3Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով՝ «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, «ՀՀ աշխատանքային օրենսգրքով», դպրոցի կանոնադրությամբ, օրինակելի իրավական ակտերի տեղայնացված տարբերակներով, ներքին իրավական ակտերով, նորմատիվ փաստաթղթերով: Դպրոցին վերաբերող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումը իրականացվում է սահմանված կարգով: Անհրաժեշտության դեպքում մշակվում և գործածության մեջ են դրվում ներքին գործածության համար նախատեսված իրավական նոր ակտեր (օրինակ՝ ներքին կարգապահական կանոններ, աշխատակարգեր և այլն):
Դպրոցավարությունն իրականացվում է սահմանված կարգով:
Դպրոցի գործունեության փաստաթղթերի թղթային ձևաչափից աստիճանաբար անցում է կատարվում էլեկտրոնայինի:
Դպրոցում վարվում են նաև դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր՝ ներքին դպրոցական վերահսկողություն անցկացնելու, ՈՒԹՀՎ վերլուծության նպատակով:

5.4 Կառավարման և խորհրդակցական մարմինները

Դպրոցը սերտորեն համագործակցում է և՛ կառավարման, և՛ խորհրդակցական մարմինների հետ: Դպրոցի գործունեությունը բաց է և թափանցիկ:

Կառավարման խորհուրդը գործում է և մշտապես գործել է դպրոցի կանոնադրության և լիազոր մարմնի կողմից սահմանված կարգերով իրեն վերապահված գործառույթներին համապատասխան: Նրանց գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը: Խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում, պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին:

Մանկավարժական խորհուրդը պատշաճորեն կատարում է կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները, հիմնականում գումարվում է բոլոր անդամների մասնակցությամբ, քննարկում է նաև զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրները, անդրադառնում է ընթացիկ հարցերին և կոլեկտիվ պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար:

Աշակերտական խորհուրդն ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը:

Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս մի շարք առաջարկություններով, ներքին կարգապահական կանոնների կենսագործմանը, սովորողների արտաքին տեսքին և կեցվածքին, պայքարում ուշացումների դեմ, կազմակերպում է միջոցառումներ, հանդիպումներ, ճանաչողական այցեր:

Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացվում են հանդիպումներ սովորողների հետ, լսում նրանց, լուծում տալիս խնդիրներին: Անչափ կարևորում ենք, աշակերտների կողմից բարձրացված հարցերի խոր և մասնագիտական վերլուծությունը, աշակերտական խորհրդի նախաձեռնողականության խթանումը:

Աշակերտական խորհրդի նախագահը, ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

Ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Ծնողական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով, ըստ անհրաժեշտության, մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրությանէ պարտաճանաչորեն գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում ծնողական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

Ծնողական խորհուրդը դասարանական ծնողխորհուրդների միջոցով կազմակերպել է բազում ճանաչողական էքսկուրսիաներ, այցելություններ

թանգարաններ և այլ միջոցառումներ: Ծնողների հետ համագործակցությունը շարունակվել է նաև համավարակի պայմաններում: Նրանց հետ կապն իրականացվել է առցանց՝ սոցիալական տարբեր հարթակներում:

<u>Աշակերտական համակազմ</u>

Սովորողների թիվը



Ամուր է դպրոց-շրջանավարտ կապը, ինչը փաստում է, որ մեր սաները սիրում են դպրոցը, սիրով են հաճախում, իրենց զգում են հարգված, ապահով, գնահատում են դպրոցի տնօրենության և մանկավարժական համակազմի աշխատանքը, այդ մասին են վկայում նաև ներքին գնահատման շրջանակներում արված հարցումները:

Դպրոցը հատուկ ուշադրություն է դարձնում աշակերտների հաջողություններին դպրոցում և դպրոցից դուրս: Կարևորում է նրանց ձևավորումը՝ որպես անհատականություններ, որպես քաղաքացիներ, ցուցաբերում է անհատական մոտեցում բոլոր դաշտերում: Դպրոցը պարբերաբար տարբեր ձևաչափերով խրախուսում է շնորհալի, դպրոցասեր և ակտիվ աշակերտներին, նրանց նախասիրությունները:

Դպրոցի աշակերտները հաջողությամբ մասնակցում են առարկայական օլիմպիադաների, տարբեր առարկայական մրցույթների («Մեղու», «Կենգուրու», «Русский медвежонок»), ստեղծագործական և սպորտային մրցույթների: Աշակերտներից շատերը մասնակցում են նաև միջազգային մրցույթների:

Մանկավարժական համակազմ

- Դպրոցում աշխատում են 28 ուսուցիչներ,որոնցից 28-ը ունեն բարձրագույն կրթություն
- Դպրոցի վարչական աշխատողների թիվը 3
- Համատեղությամբ ուսուցիչներ 1, բոլորն ընդգրկված են առարկայական մեթոդական մասնախմբերում:
- Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածություն գործակիցը 11 ժամ է:
- Իրականացնել պաշտոնի նկարագրով սահմանված պարտականությունների կատարման դեպքում խրախուսման գործողություններ
- Պատվոգրեր,դրամականպարգևներ,պաշտոնեական աճ

Մանկավարժական համակազմը համալրված է փորձառու և որակյալ կադրերով: Եկու ուսուցիչ ունեն որակավորման տարակարգ: Ուսուցիչները համավարակի պայմաններում բարելավեցին իրենց կարողությունները տեղեկատվական տեխնոլոգիաների դաշտում և կարողացան պատշաճորեն իրականացնել հեռավար ուսուցում: Այսօր էլ, ըստ անհրաժեշտության, իրականացնում են հիբրիդային ուսուցում, մեծամասնությունը հմտորեն կիրառում է MS Teams հարթակն իր բոլոր հնարավորություններով, հմտորեն օգտվում է առկա էլեկտրոնային կրթական ռեսուրսներից, նաև իրենք են ստեղծում ռեսուրսներ:

Մի քանի սուոսուցիչների գիտական կամ մեթոդական հոդվածներ տպագրվել են հանրապետական պարբերականներում:

Դպրոցի ուսուցչական համակազմը համալրվում է ուսուցչի թափուր տեղի համար հայտարարվող մրցույթով՝ ըստ լիազոր մարմնի կողմից սահմանված կարգի:

Կադրային քաղաքականությունը կրել է կրելու է շարունակական բնույթ, մանկավարժական համակազմը համալրվելու է նոր բարձրորակ կադրերով:

Բոլոր ուսուցիչները հիմնականում ապահովված են մեկ դրույքաչափով:

Դպրոցում գործում են հայոց լեզվի և գրականության, օտար լեզուների, մաթեմատիկայի և ինֆորմատիկայի, պատմահասարակագիտական և բնագիտական առարկաների մեթոդմիավորումները՝ ըստ իրենց գործառույթների:

6. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ՝ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ոլորտ	Խնդիր
Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական/ֆիզիկական/միջավայրի հարստացում, նյութատեխնիկական բազայի համալրում նոր ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով:
Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը	Արտաբյուջետային միջոցների ստեղծում
Կառավարման և խորհրդակցման մարմիններ	Շրջանավարտների խորհրդի ստեղծում
	Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև սերտ համագործակցության ամրապնդում
Մանկավարժական համակազմ	Մանկավարժական համակազմի համալրում հմուտ և փորձառու կադրերով: Մասնագիտական և դասավանդման որակների արդիացում և բարելավում
Աշակերտական համակազմ	Կոմպետենտ (կարողունակ) քաղաքացիների ձևավորում և աշակերտ թվի աճ
Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում
	Համագործակցությունների շրջանակի ընդլայնում
	Սոցիալ-մշակութային դպրոցի կայացում
ՈՒսումնական միջավայր	Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում:
Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	Սովորողների մասնագիտական կողմնորոշման միտված միջոցառումների ընդլայնում:
	Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը միտված միջոցառումների ընդլայնում
	Օտար լեզուների խորացում, ցանկի ընդլայնում

Տեխնոլոգիաներ և նորարարություն	Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում դասապրոցեսում, ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում Մեդիագրագիտություն կարևորում ու զարգացում Մենթորական համակարգի ներդնում
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր	Ապահովել օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ուսուցիչների ակտիվ մասնակցությունը
	Համալրել ՆԴՎ իրականացման էլեկտրոնային գործիքակազմը՝ որպես ներքին իրավական ակտերի

7.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1Դպրոցի նյութատեխնիկական բազան և ֆինանսատնտեսական գործունեությունը

Հետագա հինգ տարիների ընթացքում դպրոցը պետք է ամբողջությամբ ապահովված լինի գույքով, սարքավորումներով, ունենա բավարար ֆինանսական ռեսուրսներ ընթացիկ ծախսերի համար: Խնդրի բարդությունն այն է, որ տեխնիկայի արագ զարգացման հետևանքով սարքավորումները հնանում են, հնարավոր չէ մեկ անգամ գնել և օգտագործել մինչև շարքից դուրս գալը: Անհրաժեշտ է թվային սարքավորումները անընդհատ թարմացնել / առնվազն 8 տարին մեկ/: Հետևաբար բյուջեում պիտի նախատեսվի գումար՝ պակաս սարքավորումների գնման, և՝ հնացածը նորացնելու համար: Հնարավոր է նաև որոշ տնտեսումներ անել՝ աշակերտական նոր գույք առնելու փոխարեն հինը վերանորոգելով:

7.2 Զարգացման հիմնական նպատակները, կրթության որակը և համապատասխանությունը

Ստ. Շահումյանի անվան հ.1 հիմնական դպրոցը պետք է շարունակի իրականացնել իր առաքելությունը՝ գլխավոր շեշտը դնելով կրթության որակի վրա:

Դպրոցի կրթության որակի առավել վստահելի ցուցանիշներից է աշակերտների մասնակցությունը առարկայական օլիմպիադաների տարածքային, քաղաքային և հանրապետական փուլերին, առանձին մրցույթներին: Կրթության որակի կարևոր ցուցանիշ է շահառուների, այսինքն՝ սովորողների և ծնողների կողմից տրված գնահատականը դպրոցի գործունեությանը: Սովորողների և ծնողների կողմից դրական արձագանքներին ավելի շատ են, քան ահազանգերն ու դժգոհությունները:

Ուսման որակի բարձրացման համար կարևոր նշանակություն ունի ուսուցչի կողմից պարտադիր պարտականությունների՝ ժամանակին և ճիշտ կատարումը: Պետք է մշտական վերահսկողության տակ վերցնել.

- դասերի ամենօրյա պարտադիր պլանավորումը,
- <<Emis.am>> կայքի ամբողջական և ամենօրյա վարումը

- աշխատանքի և դասավանդման ընթացքում թվային տեխնոլոգիաների պարտադիր օգտագործումը:

Բոլոր ուսուցիչներն ատեստավորված են՝ 6-ը մասնակցել են պարտադիր:

7.3 Կրթության մատչելիությունը և մասնակցությունը

Կրթության համակարգի բնութագրիչներից են կրթության մեջ ընդգրկվածության ցուցանիշները: Հայաստանում հանրակրթության մեջ ընդգրկվածության խնդիր չկա:

Կարևորվում է դպրոցներում բարձրորակ կրթության ապահովումը, մանկավարժական բարձր պրոֆեսիոնալիզմը, բարձրագույն ուսումնական հաստատություններում մեծ թվով սովորողների ընդգրկվածությունը, որոնց առակայությունը, հիմք է, որ հիմնական դպրոցն ավարտելուց հետո շատերը ցանկանան ուսումը շարունակել ավագ դպրոցում:

Պետք է ասել, որ Ստ. Շահումյանի անվան հ.1 հիմնական դպրոցը այդ հիմքերն ունի, որի լավագույն ապացույցը դասարանների թվի չկրճատվելն է, նաև ավելանալը՝ սովորողների թվի աճը:

Սակայն առաջիկա տարիներին անհրաժեշտ է էլ ավելի հետևողական աշխատանք տանել՝ սովորողների քանակը ավելացնելու համար՝ ուժեղացնելով համագործակցությունը համայնքի, Դավթաշեն վարչական տարածքի և մայրաքաղաքի մյուս հիմնական դպրոցների հետ:

Սովորողների թվի ավելացման նպատակի համար պետք է ոչ միայն դպրոցի հեղինակության բարձրացում, այլև արտաքին գնահատման վարկանիշային բարձր միավորի ապահովում, օլիմպիադաներում ակտիվ մասնակցություն և մրցանակներ:

Կարևորվում է կրթության մատչելիությունը բոլորի համար՝ անկախ ազգային պատկանելիությունից, սոցիալական վիճակից: Սովորողները պետք է իրավունք ունենան ընտրելու և սովորելու իրենց կարիքներին, անձնական ունակություններին համապատասխան կրթական ոլորտում՝ բացառելով ֆինանսական խնդիրների պատճառով հանրակրթական դպրոցներում ուսումը չշարունակելու խոչընդոտները: Սովորողները պետք է վստահ լինեն, որ իրենց անձնական և սոցիալական խնդիրները չեն կարող խանգարել կրթություն ստանալուն, որ սովորելու են բարոյահոգեբանական ջերմ մթնոլորտ ապահովող դպրոցում:

7.4 Զարգացման գերակայությունները

Դպրոցի կրթության բնագավառի գերխնդիրը, անկախ դպրոցի առաջադիմության և որակի տոկոսային ցուցանիշներից, շարունակում է մնալ կրթության որակի բարձրացումը և սովորողների կողմից իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը: Դրան նպաստելու համար անհրաժեշտ է.

ա. Ընդլայնել դպրոցի կառավարման խորհրդի լիազորությունները և իրավունքները՝ հետևյալ ուղղություններով.

- Նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում, պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում,
- Դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- Կրթություն պետական լիազորված մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- Համայնքում դպրոցի դերի բարձրացմանը և աշակերտների թվի ավելացմանը նպաստելու համար վարչական շրջանում դպրոցի գործունեության վերաբերյալ տեղեկատվության ներկայացում,
- Ուսուցիչների և աշակերտների փորձի փոխանակման նպատակով արտասահմանյան որևէ կրթական հաստատության հետ կապի ստեղծում(Ֆրանսիայի Լիոն քաղաքի ավագ դպրոցներից մեկի հետ կապ ստեղծվել է, որը պետք է շարունակվի):

բ. Արմատապես բարելավել ծնողական և աշակերտական խորհուդների դերը և նրանց ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում: Հատկապես ծնողների՝ որպես առաջնային շահառուների հետ համագործակցությունը պետք է ավելի ակտիվ լինի: Այս առումով տնօրենությունը ծնողական խորհրդին պետք է վերապահի նաև հետևյալ լիազորությունները.

- ծնող-դպրոց էլ ավելի սերտ կապի ամրապնդում,
- ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում,
- արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին առավել մասնակցություն:

գ. Ամրապնդել ծնողական և աշակերտական խորհուրդների կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը, աջակցելով ծնողական խորհուրդների աշխատանքի կազմակերպմանը: Դրա համար պետք է ճշտել՝ թարմացնելով.

- Դպրոց հաճախող այն աշակերտների թիվը, որոնց ընտանիքներն օգտվում են «Փարոսից»-ից
- Երկկոմանի ծնողազուրկ աշակերտների թիվը
- Միակողմանի ծնողազուրկ աշակերտների թիվը
- Զոհված ազատամարտիկ ծնողներ ունեցող աշակերտների թիվը,
- Նյութապես անապահով աշակերտների թիվը,

- Ծնողների խնամքից զրկված աշակերտների թիվը
- Միայնակ մոր խնամքի տակ գտնվող աշակերտների մասին տվյալները,
- Հաշմանդամ ծնողներ ունեցող աշակերտների թիվը,
- Աշակերտների թիվը, որոնց ծնողները գտնվում են արտերկրում:

դ. Էլեկտրոնային գրադարանը, որը նաև տեղեկատվական կենտրոն է, հարստացնել տեխնիկական արդիական միջոցներով:

ե. Ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը:

7.5Վարչական բարեփոխումներ

Վարչական բարեփոխումների նպատակն է ապահովել դպրոցի գործունեության այնպիսի կազմակերպում, երբ յուրաքանչյուր աշխատողի համար հստակ սահմանված կլինեն նրա պարտականությունները, կստեղծվեն աշխատանքի և մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ պայմաններ, կապահովվեն մշտական վերահսկողություն և անհատական պատասխանատվություն:

Նախատեսվում է.

- Կատարել տնօրենության կազմի միջև պարտականությունների այնպիսի բաժանում, որը կապահովի բոլոր օղակների արդյունավետ կառավարումը և աշխատանքը, բաժանումը պիտի իրականացվի՝ հաշվի առնելով աշխատանքի բովանդակությունը և ծավալը. Մասնավորապես, անհրաժեշտ է տարանջատել դասապրոցեսի ուսումնակազմակերպչական աշխատանքը՝ աշակերտների և ծնողների հետ տարվող աշխատանքից,
- Կատարել իրականացվող աշխատանքների ուսումնասիրում
- Մշակել և ներդնել ամբողջ դպրոցի աշխատանքի համակարգչային պլանավորման, հաշվարկման և հաշվետվության միասնական համակարգ,
- Բարելավել ներքին հսկողության մեխանիզմները՝ կարևորելով դպրոցի ֆինանսական կառավարումը:

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ: Նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայքում: Բյուջեյի ծախսերի հիմնական ուղություններն են.

- Աշխատավարձը և դրան հավասարեցված վճարները,
- Կոմունալ վճարները,
- Գրասենյակային և տնտեսական ապրանքներ,
- Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր,

- Կապիտալ ծախսեր
- Հատուկ նպատակային ծախսեր
- Այլ ծախսեր:

Նախորդ տարիների ֆինանսական ցուցանիշները ցույց են տալիս, որ ֆինանսական միջոցները հիմնականում բավարարում են աշխատավարձերին, կոմունալ ծախսերին, հիմնական միջոցների ձեռքբերմանը, ընթացիկ վերանորոգմանը աշխատանքների կատարմանը:

Անհրաժեշտ է դպրոցի կարիքները հոգալու համար (պետական բյուջեի միջոցներից բացի) հայթայթել լրացուցիչ ֆինանսական միջոցներ:

Յուրաքանչյուր տարվա համար, ելնելով զարգացման սույն ծրագրից, նախատեսել դպրոցի նյութատեխնիկական բազայի աստիճանական բարելավման պլան-ծրագիր, իսկ խորհրդի հավանությանը ներկայացնել.

- Հաստիքացուցակը՝ համաձայն մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկի ու նկարագրի, և այդ ցուցակում կատարվող (հավանական) փոփոխությունները՝ ատեստավորմամբ որակավորված ուսուցիչների հավելավճարով,
- Տարիֆիկացիան,
- Բյուջեն և շահույթի բաշխման նախագիծը, որում հաշվետու տարվա շահույթը բաշխված կլինի անհրաժեշտ ուղղություններով (պահուստային ֆոնդ, կուտակային ֆոնդ, սպառման ֆոնդ):

8.ԴՊՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

2017 թվականին պետական բյուջեին 1մլն դրամ պարտք, որը մինչև 2018 թվականը մարվել է ՊՈԱԿ-ի կողմից

- Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումները
- Դպրոցի բյուջեի արդյունավետ և նպատակային օգտագործումը
- Գրագետ մենեջմենթը՝ ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումը՝ ըստ օրենսդրական պահանջների
- Աշխատավարձի և կոմունալ ծախսերի ժամանակին վճարումը
- Նոր գույքի ձեռքբերումը
- Հակահամաճարակային կանոնների պահպանման համար անհրաժեշտ միջոցների ձեռքբերումը
- Գրագետ մասնագետների ճիշտ աշխատանքի արդյունքում կոմունալ ծախսերի տնօրինում
    1. Ջեռուցման սեզոնին գազի ծախսի տնտեսում մոտ 40%-ով
    2. Էլ. Էներգիայի ծախսի տնտեսում
    3. Տարեկան կտրվածքով մոտ 30%-ով («LED») և ջեռուցման սեզոնի մարտկոցների ճիշտ կառավարում և կանոնակարգում

Երևանի «Ստ. Շահումյանի անվան հ.1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի՝ 2022-2027թթ. զարգացման ծրագիրը մշակվել է « Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետի պահանջներին համապատասխան:

Դպրոցի զարգացման ծրագրի մեթոդաբանական հիմքերն են.

1. Դպրոցի ներքին գործունեության՝ 2017-2018, 2018-2019, 2019-2020, 2020-2021 ուսումնական տարիների ներքին գնահատման հաշվետվությունը,
2. «ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը»,
3. «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագիծը,
4. «Երևանի զարգացման 2019-2023թթ հնգամյա ծրագիր»,
5. Նախորդ 5 տարների գործունեությունը,
6. Մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները,
7. Դպրոցում առկա հիմնախնդիրները:

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը նախասահմանում է 2022-2027թթ դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները՝

պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան. Հաշվի են առնված կրթական հաստատության ինքանազարգացման ներուժը:
Սույն հեռանկարային ծրագրի հիման վրա պետք է կազմվեն տարեկան աշխատանքային պլաններ:
Դպրոցի զարգացման ծրագիրը կազմելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացնել դպրոցի առաքելությունը, իմանալ՝ ինչ է ծրագիրը և պլանավորումը

«Առաքելությունն» այն է, ինչի իրականացմանը կոչված է տվյալ հաստատությունը: Այն ունի շարունակական բնույթ:

Ծրագիրը պլանավորված գործողությունների և ներդրումների համախումբ է, որն ուղղված է որոշակի ժամանակահատվածում նախանշված նպատակների և խնդիրների իրագործմանը: Ծրագրի առանցքային խնդիրը դպրոցի զարգացման նոր ուղիներ գտնելն է, որոնք պետք է նպաստեն սովորողների ներդաշնակ զարգացմանը, կարողությունների (կամային անհատի) և քաղաքացու ձևավորմանը, որը կունենա ազգային արժանապատվության խորը գիտակցություն, ազգային արժեքների արժևորման ու դրանց պահպանման պատասխանատվություն, կունենա իր ներուժին և նախասիրություններին համապատասխան մասնագիտական կողմնորոշում, աշխատաշուկայում իր տեղը գտնելու կամք և գիտակցական բարձր մակարդակ:

9.ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ըստ Ստ. Շահումյանի անվան հ.1 հիմնական դպրոցի զարգացման սույն ծրագրով նախատեսված հնգամյակի վերջում ակնկալվում է՝

Հրապուրիչ, որակյալ, բարձր արդյունավետությամբ կրթական միջավայր

Վերանորոգված և նյութատեխնիկական բազայով հագեցած բարձր վարկանիշով դպրոց

Փորձառու և ճանաչված մասնագետներով, տարակարգ ունեցող ուսուցիչների աճով, հավելավճարով վարձատրվող, նորարար ստեղծագործող ուսուցիչներ ունեցող դպրոց

Սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոց

Ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան ԱԽ և ԾԽ գործունեություն

ՏՀՏ միջոցների լիարժեք ներդնում և կիրառում դասապրոցեսում

Աշակերտ թվի ավելացում

Սովորողների ինտեգրում միջազգային դաշտին

Սովորողների առավել ակտիվ մասնակցություն առարկայական օլիմպիադաներին

21-րդ դարի կարողունակ, ազգային արժեքները գիտակցող անհատի և մրցունակ քաղաքացու ձևավորում

Ապագա մասնագիտության առավել ճիշտ կողմնորոշում և ընտրություն

Աշակերտ-ուսուցիչ-դպրոց-համայնք առավել սերտ կապի ապահովում, նախկին շրջանավարտների հետ հարաբերություն-ների ամրապնդում

Լիցենզավորման պարտադիր պահանջներին ու պայմաններին բավարարող լաբորատորիաների ու կաբինետների ավելացում՝ ժամանակակից սարքավորումներով, գրադարանային տեղեկատվական համակարգի բարձր հագեցվածություն

Դպրոցի խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետութ-յան բարձրացում

Սովորողների ուսման մոտիվացիայի բարձրացում

10.ԴՊՐՈՑԸ ԵՐԱՁՈՒՄ Է ՈՒՆԵՆԱԼ ՀԱՄԱԼՐՎԱԾ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ

2022-2027թթ. Կստեղծենք արդիական ուսումնական լաբորատորիաներ, որոնք կգրավեն երեխաներին, կնպաստեն արդի լաբորատոր սարքերով հագեցած դասեր ունենալուն և կառաջացնեն սեր ու հետաքրքրություն ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն և աշխարհագրություն առարկաների հանդեպ: Այսպիսով կբարձրանա հետաքրքրությունը ԲՏՃՄ (Բնագիտություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա) բնագավառի առարկաների նկատմամբ: Արդի լաբորատորիաները հնարավորություն կընձեռեն սովորողներին բացահայտելու իրենց ներուժը, կատարելու փորձարկումներ ու փոքրիկ հայտնագործություններ: Դրանց շնորհիվ աշակերտը կգիտակցի իր կարողությունները և ապագա հաջողությունների հիմքերը:
Կստեղծվի լաբորատոր համալիր՝ ուրույն տարածքային լուծումներով, կահավորանքի և սարքավորումների համալրվածությամբ, կոմունիկացիոն և անվտանգության համակարգով:

11.ՄԵՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Դպրոցական գույքի ձեռքբերում 2017-2022

- 8 Հատ կոմպլեկտ աշակերտական սեղան աթոռներով (24 աշակերտի)
- 20 Հատ կոմպլեկտ աշակերտական դասասեղաններ աթոռներով (40 երեխայի)
- 4 Հատ նիստերի համար նախատեսված սեղաններ
- 6 Հատ ուսուցչական սեղան
- 2 Սեղան իրենց աթոռներով (բուֆետի համար)
- 6 Հատ աշակերտական նստարաններ
- Մուտքի դռներ
- Գոգեր և ուղեգոգեր
- Շերտավարագույրեր 4 դասասենյակի համար

Նախատեսվող

- Դասասենյակների վերանորոգում
- 2-րդ աստիճանավանդակի վերանորոգում
- Ջրհորդանների վերանորոգում
- Արդի գրադարանների ստեղծում
- Նիստերի դահլիճի ստեղծում
- 2-րդ և 3-րդ հարկի հատակի ամբողջական վերանորոգում
- Պրոյեկտորի ձեռքբերում
- Թվային գործիքների ձեռքբերում

Գնահատման Ռուբրիկ

Գնահատման չափանիշը	**Գնահատականը**		
	բավարար	լավ	գերազանց
Նախատեսված աշխատանքները կատարվել են մասամբ			V
Նախատեսված աշխատանքները հիմնականում կատարվել են		V	
Նախատեսված աշխատանքները կատարվել են ամբողջ ծավալով			V

12.ՎԵՐՋԱԲԱՆ

Տվյալ դպրոցի զարգացմանն ուղղված ներկայացված ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է ապահովել դպրոցում աշակերտների համար ռազմահայրենասիրական ուսումնադաստիարակչական, բարոյահոգեբանական սոցիալական բարենպաստ միջավայր: Ակնկալվում է նպաստել դպրոցի բնականոն զարգացման գործընթացին, հաղթահարել ժամանակի մարտահրավերները և երաշխավորել դպրոցի մրցունակությունը ժամանակակից և մշտապես զարգացող հասարակական միջավայրում: Դպրոցի զարգացմանն ուղղված հնգամյա ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ժամկետները սահմանված են սույն ծրագրի անբաժանելի մաս կազմող ժամանակացույցով:

13.«ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի 2022-2027ԹԹ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	Ակնկալվող արդյունք	ժամկետ
1	Աշակերտ թվի ավելացում	Պարբերաբար
2	Սովորողների ինտեգրում միջազգային դաշտին	Պարբերաբար
3	Սովորողների առավել ակտիվ մասնակցություն առարկայական օլիմպիադաներին	Պարբերաբար
4	Սովորողների առավել ակտիվ մասնակցություն առարկայական օլիմպիադաներին	Պարբերաբար
5	Փորձառու և ճանաչված մասնագետներով, տարակարգ ունեցող ուսուցիչների աճով, հավելավճարով վարձատրվող, նորարար ստեղծագործող ուսուցիչներ ունեցող դպրոց	Պարբերաբար
6	Տարակարգ ունեցող ուսուցիչների աճ	Պարբերաբար
7	Աշակերտ-ուսուցիչ-դպրոց-համայնք առավել սերտ կապի ապահովում, նախկին շրջանավարտների հետ հարաբերություն- ների ամրապնդում	Պարբերաբար
8	Դպրոցի խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետութ- յան բարձրացում	Պարբերաբար
9	Վերանորոգված և նյութատեխնիկական բազայով հագեցած բարձր վարկանիշով դպրոց	Պարբերաբար
10	Դասարան 14-16	2025-2027թ.
11	Ժամանակակից արդի գրադարան	2022թ.

12	Ֆիզիկայի լաբարատորիա	2025թ.
13	Կենսաբանությանև քիմիայի լաբարատորիա	2024թ.
14	Սանհանգույց, որից մեկը հարմարեցված	2022-2023թ.
15	Տանիք՝ երկու թև	2024թ.
	ԿԱՊԿՈՒ երեխաների համար հատուկ գույքի ձեռքբերում	2023թ.
	ԿԱՊԿՈՒ երեխաների համար հատուկ գույքի ձեռքբերում	2026թ.

14.ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Արդեն իսկ2017-2022 թվականների դպրոցի զարգացման ծրագրում տեղ գտած բոլոր դրույթներն իրատեսական են, իրագործված,վերջնարդյունքները՝ շոշափելի և տեսանելի: Այն ապահովելու է 2022-2027 թվականներին կատարված աշխատանքների տրամաբանական շարունակությունը:

Նախատեսված աշխատանքների համար կան արդեն ձևավորված ամուր հիմքեր: